

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի պատասխաններ

## IX-դասարան

1. Մովսես Խորենացին անգնահատելի դեմք է մեր հին մատենագիրների մեջ. նրա «Հայոց պատմությունը» ավելի քան տասը դար եղել է հայ ազգի միակ դասագիրքը՝ իր հին անցյալին ծանոթանալու: Այս գիրքը մեր ժողովրդի ծննդյան վկայականն է, մեր ինքնության հաստատումը, մեր տեղը աշխարհի մեջ որոշողը:

Խորենացու շնորհիվ մեզ են հասել մեր առասպելների և վիպերգերի մի չնչին մասը միայն, բայց այդքանն էլ բավական է, որպեսզի և՛ մենք, և՛ օտարները ճանաչեն մեր ազգը: Նրան մեծարել են բազմաթիվ տիտղոսներ-

րով՝ Պատմահայր, Քերթողահայր, տիեզերահռչակ քերթող, հայ Հերոդոտոս:

Գուռշմիտն ասում է. «Հայերը, եթե փոքր – ինչ սնափառություն ունեն, իրավունք ունեն այսպես կոչելու նրան. Նա արևելյան ազգերի պատմական գրականության մեջ իր հնությանը առաջիններից մեկն է Մուրբ գրքից հետո» :

Խորենացու շնորհիվ մենք գիտենք, թե ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ւր ենք գնում: Այս ճանապարհին մեզ շատ թշնամիներ, քարեկամներ են հանդիպում, նրանցից մեկն էր Ասորեստանի թագուհին՝ «շամբշոտաշուրթ» Շամիրամը, որը սիրահարվել էր հայոց արքա Արա Գեղեցիկին և ցանկանում էր տիրել նրան ու նրա հետ՝ նաև Հայաստանին:

«Արա գեղեցիկ» վիպերգը մոռացությունից փրկել է Քերթողահայրը: Նա գրի է առել «Արայի և նրա մահվան մասին Շամիրամից՝ պատերազմի մեջ» վիպերգը, որտեղ Շամիրամին բնութագրում է այսպես՝ «Բայց այն վավա-

շոտ ու անառակ Շամիրամը շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել....Շամիրամ իր ախտը համարձակ պատվելով՝ պատգամավորներ է ուղարկում ընծաներով ու նվերներով և շատ աղաչանքներով ու պարզների խոստումով խնդրում է գալ Նինվե՝ իր մոտ, և կա՛մ իրեն կին առնել և բոլորի վրա թագավորել, կամ նրա ցանկության կամքը կատարել և մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ»:

«Մուլեզին ցանկությունից՝ նա տոփանքով սիրահարվել էր Արայի մասին եղած պատմություններին՝ որպես թե նրան տեսնելիս լիներ....մինևույն ժամանակ նա հույս ուներ կախարդական դյուրությամբ Արային կենդանացնել՝ տոփական ցանկությունից ցնորված»:

Եվ երբ մերժվում է Արայից, «փութով գալիս հասնում է Արայի դաշտը», որ նրա անունով կոչվեց Այրարատ: Նա պատվեր էտալիս՝ ջանալ կենդանի պահել Արային, բայց Արան ընկնում է պատերազմի մեջ: Հաղթությունից հետո տիկինը դիակապուտներ է ուղարկում՝ Արային գտնելու: Արային գտնում են քաջամարտիկների մեջ՝ մեռած, և նա հրամայում է նրա մարմինը դնել ապարանքի վերնատանը՝ որպես թե վերակենդանացնելու:

Պատմահոր բնորոշումները՝

«...Եվ հաճախ իր որդիներից հանդիմանվելով իր սաստիկ վավաշոտ ու անատակ վարքի պատճառով նրանց բոլորին կոտորում է . ազատվում է միայն Նինվասը»:

«...Ամուսինը, գիտենալով նրա ախտասեր և չարասեր բարքը... »

«դիվական տոփանք, «Ուլունք Շամիրամա ի ծով» և Նիոբեից առաջ քար դարձավ:

Խորենացին փաստացի ոչ մի դրական գիծ չի տեսնում Շամիրամի մեջ,

Անգամ գեղեցկությունը չի ներկայացնում այնքան հմայիչ, որքան պատկերացրել են հետագա բոլոր բանաստեղծները, իսկ նրանք այդպես են պատկերացրել, որպեսզի ցույց տան հայ արքայի և հայ ժողովրդի անափ հայրենասիրությունը, անհատթելի կամքը, որ չի երերում անգամ անդիմա-

դրելի գեղեցկությունից:

Իհարկե, արդիական է, քանի դեռ հին ու նոր աշխարհը ծարավի է նոր

պատերազմների, նոր ցեղասպանության , Շամիրամներ և Արաներ միշտ էլ լինելու են, վկան՝ մեր ժողովրդի վերջին ողբերգությունը, բայց մոխիրներից ելնելու են հայրենասեր Արաները, իսկ բռնակալ Շամիրամ-

ներին սպասում է հե՛նց Շամիրամի ճակատագիրը:

Հայրենիքը վեր է ամեն ինչից....

Ուրեմն՝ Պատմահայրը, ճշգրիտ գրի առնելով վիպերգը, հաստատում է, որ կուրությամբ և տոփանքով լցված Շամիրամին սպասում է նման անփա-

ռունակ մահ, և այդպես կլինի բոլոր նրանց հետ , ովքեր հանիրավի կփոր-

ձեն տիրանալ մեր աշխարհին. Նրանց դեմ կելնեն հազարավոր Արաներ ու կփրկեն մեր հայրենիքը:Ոչ մի նվաճող տեղ չունի Հայաստանի հողում:

2. Հայ գրականության ամենանուրբ ու գեղագետ գրողներից է Նար-Ռոսը:

Երևի թե նրա ստեղծագործության նրբությունն ու խորությունն է հուշել

Դանազոզյանին՝ նրան կնքելու այդ հրաշալի ծաղկի անունով:

Նար-Ռոսը մարդկային հոգու խորագիտակ թարգման է , ծածուկ դաստիա-

րակ ,որ ընթերցողին տանում է իր հերոսների աշխարհը՝ նրանց էլ դարձնելով

մասնակից ծավալվող իրադարձություններին:

Նար-Ռոսը հոգեբանական գրականության հիմնադիր-ներկայացուցիչնե-

րից է .« Չեխովի մասին ասում են «Հոգու շերտերի փայտփորիկ», այս բնորոշումը

կարող ենք տալ նաև Նար-Ռոսին, որը Չեխովին ընդունում էր որպես անատարկելի

տաղանդ:

Նար-Ռոսի հրաշալի պատմվածքներից է «Ես և Նա » պատմվածքը: Հերոսները

ընդամենը երեքն են, բայց նրանց հոգեբանության միջոցով գրողը բացահայտում է մարդկային հոգու անկումն ու կամքը, սիրո խորհր

դավոր ուժը. մեկի դեպքում այն կործանում է, անկամություն, թուլություն, մյուսի

դեպքում՝ կամք, վերելք, փառք ,արժանապատվություն:

Հոգեբանի նուրբ դիտողականությամբ Նար-Ռոսը բացահայտում է մարդու էությունն

ընդհանրապես: Մարդկանցից ու սիրած էակից մերժված Անտոնին «վրեժխնդիր» է

լինում իրեն «ներքևում » տեսնողներից և նվաճում է այն բարձունքը, որը անհասանելի

է «վերններին», իսկ գրեթե ամեն ինչի հասած թուլական երիտասարդը կորցնում է պայքարելու կամքը, ինքն իրեն վերագտնելու հույսը և դառնում է մուրացիկ ու հարբեցող, քանզի նրան ամեն ինչ տրվել էր առանց ջանքի:

Անտոնիոն համառ , պայքարող, արժանապատիվ պատանի է, նա վրեժխնդիր է լինում բարձրանալով, նվաճում է «բարձր» հասարակության աշխարհը և ստիպում Ջուլիետային՝ ծնկի գալ իր առաջ, բայց նա չի կարող ներել նրան, ով սերը ստորադասել է հարստությանը, դիրքին, ով մոռացել է ինքնամոռաց երաժշտության և սիրառատ զբոսանքների անբացատրելի խորհուրդը և մի ակնթարթում փակել բաղձալի պատուհանը:

Ջուլիետան փառասեր է, իր միջավայրի հարազատ ծնունդը, նրա համար դոժերի պալացցոներն ու շքեղ պարահանդեսները կյանք են, ապրելու իմաստ :Երբեմնի անաղարտ հոգով ու սրտառույզ գթասրտությամբ օժտված աղջիկը այժմ անսիրտ է .

վար նետված երկտողը հենց դրա արտահայտութ

յունն է. մոռացվում են հոգեպարար երաժշտությունը, Անտոնիոյի սիրագեղ հայացքը, նավակների սահքը Ադրիատիկի խաղաղ ջրերում, լու

սնափայլ գիշերները, որովհետև «Մենք վերեն ենք, դուք՝ ներքեր»:

Եվ ...կյանքը շարունակվում է:

Սակայն «ներքեր» բարձրանում է, անընդհատ բարձրանում՝ ունկնդիր իր խոցված ինքնասիրության ու արժանապատվության ձայնին:

Գալիս է հատուցման ժամը .շքեղ տիկինը ծնկաչոք ներում է հայցում և հաս

տատում իր սերը, բայց արժանապատիվ երաժիշտը նրան մերկացնում ու

արհամարհում է իր իսկ զենքով: Ուրեմն՝ դատարկ, վայելքներին տրված «վերը»

պարտվում է, իսկ «ներքեր» բարձրանում է ,բարձրանում է հաստատական ու վստահ, ուրեմն՝ հաղթում է ոգին, անընկճելի ու վեհ ոգին: Դրա համար էլ տեսրը ունի «Վրեժ »

վերնագիրը:

Բայց չարական վրիժառությունը չէ, որ հաղթում է, այլ ապրելու, պայքարելու կամքը:

Իսկ իրավաբան , երբեմնի ինտելիգենտ, բարեձև, գեղեցիկ ու ապահովված

երիտասարդը կործանվում է, որովհետև նրա միջավայրը չի կարող պայքարել , չի

կարող «վրեժխնդիր» լինել ինքն իրենից: Կործանումը սոսկալի է. խեղճ ու ողորմելի

մուրացկան է դառնում նա, ով կարող էր դառնալ հիանալի փաստաբան և պաշտպանել

միտքն ու հոգին հարստահարող բոլոր դատերը:

Այլ է Լևոնը Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքում:

Այս շնորհաշատ երիտասարդը ապրում է թատրոնով, զգում է երաժշտությունն ու երգը

ամբողջ հոգով, սիրում է գեղեցիկը, հավատում է իր հաղթանակին: Սակայն

միջավայրը, անուրախ մանկությունը, հիվանդ մոր «բռնակալ» սերը, Լուիզայի

ամուսնությունը, կրկնակի կողոպուտը նրան հասցրին ծայր աստիճան

հուսահատության: Նա հեռացավ առանց չարության , քանի որ «ազնիվ էր՝ որպես

նորածին, և զգայուն՝ որպես քնարի լար»: Մենք արհամարհում ենք իրավաբանականի

ուսանողին թու

լակամության, անինքնասիրության, վիրավորանքը արժանապատիվ տանելու անկարողության համար, հիանում ենք Անտոնիոյի կամքով, հաղթելու հավատով, վիրավորանքը բարձրանալու խթան դարձնելու կարողությամբ, իսկ Լևոնին սիրում ենք, գնահատում, ապրում նրա ծանր ճակատագիրը: Դժվար է Լևոնին անկամ համարել, ավելի շատ նա հուսահատ հոգի է՝ հանձնված կյանքի ալեկոծ ծովին. Նրա ուժը չի բավականացնում՝ հաղթահարելու ալեկոծ ծովի լեռնացող ալիքները ընտանիքի, հասարակության, միջավայրի ցավոտ անտարբերությունը:

3. Եղիշե Չարենցը՝ Հարդագողի հավերժ ճամփորդը, հայ նորագույն գրականության հիմնադիրը, գալիս է Մաշտոցից ու Խորենացուց, Նարեկացուց ու Շնորհալուց, Սայաթ-Նովայից ու Տերյանից: Իր նոր, հզորագույն խոսքով նա դարձավ հայ գրականության ուղենշային աստղը՝ ազդարարելով՝

Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական

Դեպի դարերը նորից, դեպի վառվող ապագան:

Չարենցն անցել է արտակարգ բարդ ու հարուստ ստեղծագործական ուղի՝ իր ճանապարհին ցանելով ապագայի լույսի ու հավատի հունդեր, դարձել է իր հայրենիքի «եղերական ու անբասիր» գոհը՝ պատգամելով՝ «թող ոչ մի գոհ չպահանջվի ինձնից բացի»:

1920-21թվականները առանձնանում են Չարենցի ստեղծագործության մեջ: Այդ տարիներին է ստեղծվում հրաշալի «Տաղարանը», որը նվիրված է իր անբեկանելի սիրուն՝ Արփենիկին, որը կերպավորվում է սայաթնովյան գոգայի կերպարով, որը վերջին երկու տաղերում վերաճում է Հայաստան –յարի կերպարի: «Ես իմ անուշ Հայաստանի...» տաղը գերազանց սիրո արտահայտություն է հայրենիքի նկատմամբ: Այս հրաշակերտ տաղը Հայաստանի պատմության, բնության, հարատևության քարտեզագրումն է:

Ընդամենը 16-տողում Չարենցը գրչագրում է Հայաստան-յարի անցած ճանապարհը՝ «արևահամ բառ, երկաթագիր գրեր, ողբաձայն երգեր, արևա նման ծաղիկներ ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պար, լուսե լիճ ու մուգ երկինք, անհյուրընկալ խրճիթներ ու հազարամյա քաղաքներ, լուսապսակ Նարեկացի ու Քուչակ և անհաս փառքի ճամփա Մասիս սար», որի խորհրդով էլ կերպավորվում է հայրենիքը: Այս տաղը հայրենահիացու

մի «շնչական մատյան է», թրթռացող հոգի ու արյան եռք, որը ցանկացած հայի աղոթքն է, հպարտությունը, կենսագրությունը:

Հանճարեղ նկարիչ Մարտիրոս Մարյանը այս տաղի ազդեցությամբ նկարել է «Հայաստան» կտավը, որոշել Չարենցի կամարի աշխարհագրա-

կան դիրքը, որտեղից «Արարատի ճերմակ գագաթը» իշխում է Հայաստան աշխարհին: Մարյանը այս տաղի մասին գրել է. «Ես իմ անուշ Հայաստանին» բոլոր մասշտաբներից դուրս պաննո է: Պաննո՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանին: Դա անհիշելի ժամանակներից եկող Հայաստան-Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ պաննո-դիմանկարն է: Դա մեր ազգային կենսագրության ու վարքի կենդանի

արտացոլքն է»: Ավելի դիպուկ բնորոշում, թվում է, այլևս անհնար է տալ, բայց հանճարեղ նկարչին լրաց-  
նելու է գալիս մի ուրիշ հանճար՝ Բարի հսկան՝ Վիլյամ Մարոյանը՝ ասելով. «Ձայն մինչև այսօր կնկատեմ մեր երկրին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը. «Հայր մերին» նմանվող աղոթքը մը » :  
Տաղի մակդիրները ընտրված են Թումանյանի պատգամով՝ «Բառը մի աշխարհ է»: Անհնար է փոխել որևէ մակդիր՝ արևահամ բառ, ողբանվագ, լացակուրմած լար, հին սագ, լիճը լուսե, Հայաստան յար և այլն: Հետաքրքիր է նաև հետադաս հասկացուցիչների կիրառությունը, որը ոչ միայն հանգա վորման համար է՝ վերքերը մեր, երգերը մեր, գրքերը մեր, իսկ համեմատությունները խոսուն պատկերներ են՝ . Արարատի նման ճերմակ գագաթ չկա, որպես անհաս փառքի ճամփա ես իմ Մասիս սարն եմ սիրում  
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա:  
Անգամ համեմատությունները կարծես համեմատություն են իրենք իրենց մեջ, այսինքն՝ Հայրենիքը համեմատվում է միայն ինքն իր հետ:  
«Ես իմ անուշ Հայաստանի» տաղով փակվում է «Տաղարան»-ը՝ օրհներգելով հայրենի երկրի անցյալը, Ներկան ու Գալիքը:

4. Դերենիկ Դեմիրճյանը իր արձակով նոր էջ բացեց հայ գրականության մեջ: Լինելով հրաշալի պատմող՝ նա իր պատմվածքները շաղախել է ժողովրդական լեզվամտածողությամբ, հոգեբանական նուրբ անցումներով, անսպասելի վերջաբանով: Դեմիրճյանի լավագույն պատմվածքներից է «Ավելորդը»: Արդեն իսկ վերնագիրը ընթերցողին հուշում է , որ սպասվում է լարված ընթերցում:

Դեմիրճյանը վարպետ է վերնագրեր ընտրելու հարցում: Վերնագիրը նա դարձնում է գրվածքը հասկանալու բանալի: «Ավելորդը» պատմվածքը նույնպես մեզ ստիպում է կանխապ տրամադրվել հոգեցունց դեպքի:

Պատմվածքը գրվել է 1877-78 թ.թ. ռուս-թուրքական պատերազմի իրադարձությունների լույսի ներքո: Պատմվածքի սեղմ ընդգրկման մեջ Դեմիրճյանն ստեղծել է պատերազմի գոտում հայտնված սահմանամերձ փոքրիկ քաղաքի բնակիչների և , մասնավորապես, Հաճի աղայի գերդաս

տանի ու հասկապես իր՝ Հաճի աղայի շատ տպավորիչ կերպարները:

Հարուստ ու հաշվենկատ Հաճի աղան , թշնամու առաջխաղացման լուրը լսելուն պես, պատրաստվում է հեռանալու, բայց առաջինը լինելու պահը արդեն ձեռքից բաց է թողել: Այդ հապաղման պատճառով նրա տղաները կարողանում են հազիվ մի սահնակ վարձել, որով անհնար էր ամեն ինչ տեղափոխել: Հաճի աղան անասելի ծանր կացության առաջ էր հայտնվել. Կամ՝ խանութների ամբողջ ապրանքները՝ հետագա ապրուստն ապահո-

վելու համար, կամ անդամալուծ քույրը՝ բարի ու գթառատ Սրբունը, որը ամուսնու մահից հետո Հաճի աղայի պատվախնդրության շնորհիվ ապրում էր եղբոր տանը և , ընտանիքի վրա բեռ չլինելու համար, կար ու կարկատանով էր զբաղվում:

Հաճի աղան անարդար որոշում է կայացնում. Անդամալուծը ավելորդ բեռ է, պետք է փրկել ունեցվածքը: Ամբողջ ընտանիքը դեմ է այս որոշմանը, բայց Հաճի աղան անդրդվելի է: Իսկ Սրբունը չափազանց երախտագետ էր և մտահոգված էր իր եղբոր ճակատագրով. Հանկարծ նրան բան չպատահի՞: Ծանր է հրաժեշտի պահը.

Արտասվում են Հաճիի մայրը, հարսները, որդիները, թոռները: Հրաժեշտի պահին Սրբունը եղբորն է նվիրում իր իսկ հյուսած ձեռնոցները: Նա համակերպված է իր ճակատագրին, չի դատապարտում եղբորը, ինքն էլ է իրեն ավելորդ համարում ու մնում է թուրքերի կողմից նվաճված քաղաքում:

Պատերազմն ավարտվում է . ոչ ոք Սրբունից լուր չունի. Նա անհետ կորել է. Կարելի է միայն ենթադրել, որ կամ թուրքերն են սպանել, կամ ինքն է ինքնասպան եղել: Հաճի աղան հոգեբանական ծանր ապրումների մեջ է:

Նա զղջում է իր արարքի համար, հանկարծ խիղճը սկսում է կեղեքել նրա հաշվենկատ ու ստոնասիրտ հոգին, և մի առավոտ նա գնում է եկեղեցի՝ քահանային ոսկի տալիս «Ավելորդին հոգուն համար», չի զլանում նաև աղ

քատներին ոսկի բաժանել, բայց խիղճը անաչառ է, և նա անկողին է ընկնում , խոստովանահայր կանչում ,դարձյալ մի քսակ ոսկի է տալիս Ավելորդի հոգու համար: Բայց մահվան մահճում նա հասկանում է , որ ինքն է ավելորդը, որ ոչ մի քսակ չի կարող փրկել նրան ծանր ապաշխարա նքից , որ աշխարհում ավելորդ մարդիկ չկան, կան ավելորդ ազահություն ու եսապաշտություն, կան գութ ու խիղճ:

Սրբունը իր ճակատագիրն ընդունում է ի վերուստ սահմանված, նա անգամ չի մտածում եղբոր քստմնելի արարքը դատապարտելու մասին, ան տերունչ մնալով ամայացած քաղաքում՝ նա աղոթում է եղբոր ընտանիքի ապահովության համար: Սրբունն իր անկաշառ բարությանը հաղթում է անհոգի Հաճի աղային, հաղթում է նրանց, ովքեր երբևէ կարող են իրերը գերադասել մարդուց, այն էլ՝ օգնության ու կարեկցանքի կարոտ մարդուց:

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի  
գնահատման չափանիշներ

#### IX դասարան

- 1-ին հարց՝ 1 ենթահարց՝ 2մ., 2-3-ը՝ 1,5-ական միավոր
- 2-րդ հարց՝ 1-ին ենթահարցը՝ 3մ., 2-րդը՝ 0,5, 3-րդը՝ 1,5 միավոր
- 3-րդ հարց՝ 1-ին ենթահարցը՝ 3 միավոր, 2-րդը՝ 2միավոր
- 4-րդ հարց՝ 1-2-րդ ենթահարցերը՝ 0,5-ական մ., 3-4-ը՝ 1-ական մ., 5-րդը՝ 2մ.